Տարածվում է անվճար

♦ **«Ձայն» վերլուծական տեղեկատվական լրատու**

Նպատակ ունի բարձրացնել Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների շուրջ հասարակության իրազեկության աստիճանը,

♦ **Լուսաբանել**

իրականացվող հանրային քաղաքականությունները և հիմքեր ստեղծել դրանց հասարակական մոնիտորինգի և մասնակցության համար:

♦ **Ձայնը հրատարակվում է «Օքսֆամ»**

բրիտանական կազմակերպության Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բյուջետային վերլուծությունների» ծրագրի շրջանակներում:

♦ **Ծրագիրն իրականացնում է Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն**

ոչ-առևտրային, ոչ-քաղաքական կազմակերպությունը:




# Հայաստանի կապույտ գեղեցկուհին

**Սևան**

Ինչքան տարբեր ենք հասկանում և զգում այս բառը: Մեկիս համար այն լեռների գրկում պարուրված երկնքի մասնիկ է, մյուսի համար՝ արևի շողանքից ժպտացող կոհակների վազք: Սակայն Սևանը հասկացվում է նաև այլ կերպ: Այն կարող է շահույթի գոյացման աղբյուր հանդիսանալ, ընդ որում՝ էական շահույթի: Աղեն քափ են հավաքել Սևանի ափամերձ հատվածներում կառուցված և կառուցվող հանգստյան տները: Տարեկան հարյուր հազարավոր տուրիստներ իրենց հանգիստն են անցկացնում այստեղ՝ ապահովելով ափամերձ հատվածի բիզնեսը զգալի եկամուտներով: Մյուս կողմից, Սևանի ջրերը հանդիսանում են հազարավոր հեկտար հողատարածքների ոռոգման միջոց, որը նույնպես մեծ եկամտաբերություն է ապահովում: Հրազդան գետի վրա կառուցված հիդրոէլեկտրակայաններն արտադրում են միլիոնավոր կիլովատ էլեկտրաէներգիա: Վերջապես, Սևանը ձկան հսկայական պաշարներ ունի, որի որսը, վերամշակումը և վերավաճառքը հազարավոր մարդկանց գոյության աղբյուրն է: Վերջին մի քանի տարվա ընթացքում Սևանա լճի մակարդակը բարձրանում է: Լիճը ապրում է և վերագտնում վաղուց կորցրած ափերը: Տարբեր է մեր վերաբերմունքը Սևանի բարձրացմանը: Վերջին շրջանում լսելի են նաև բարձրացումը կանխելուն ուղղված կարծիքներ: Ամեն մեկն իր շահն ունի:

«ՁԱՅՆ»-ի այս թողարկման մեջ անդրադառնում ենք Սևանի հիմնախնդրին:

## Խնդրահարույց հնարավորություններ

Սևանա լիճը Հայաստանի բնության հրաշալիքներից և հայ ժողովրդի ազգային խորհրդանիշներից է, որն ունի հանրապետական և տարածաշրջանային բացառիկ տնտեսական ու էկոլոգիական նշանակություն:

Սևանա լճի ջրահավաք ավազանը, համաձայն «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի, ընդգրկում է Սևանա լճի բուն ջրահավաք ավազանը (շուրջ 4890 կմ$^2$) և Արփա գետի ջրահավաք ավազանի վերնագավառը՝ Կեչուտի ջրամբարից հոսանքն ի վեր ընկած տարածքներն ու Որոտան գետի ջրահավաք ավազանի վերնագավառները՝ Սպանդարյան ջրամբարից հոսանքն ի վեր ընկած տարածքները, որոնց սահմանները դեռևս ճշգրտված չեն: Սևանա լիճը Հայաստանի ջրային հաշվեկշռում բացառիկ տեղ է գրավում: Մինչև լճի մակարդակի արհեստական իջեցումն այստեղ էր կուտակված հանրապետության ջրային պաշարների ավելի քան 80% (58.5 մլրդ մ3), որը հինգ անգամ ավելի էր հանրապետության մակերևութային ջրային հոսքից և մոտ 35 անգամ՝ մնացած ջրամբարներում կուտակված ջրային պաշարներից:

Սևանա լիճն իր եզակի ու հարուստ ֆլորայով ու ֆաունայով արժեքավորվում է հանրապետության կենսաբազմազանության համակարգում, իսկ կենսապաշարները կարևոր տեղ են գրավում մարզի և հանրապետության բնակչության սննդաբաժնում, մասնավորապես՝ դրա ձկնային պաշարները: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության, էներգետիկայի և տնտեսության այլ ճյուղերի զարգացումը սերտորեն կապված է Սևանա լճի ջրային ռեսուրսների օգտագործման հետ, հատկապես նրա քանակական և որակական հատկանիշների հետ:

Սևանա լիճն իր ֆիզիկական, քիմիական, կենսաբանական ցուցանիշներով համարվում է խմելու համար բարձրորակ բնական ջրամբար և այդ տեսակետից՝ ՀՀ ռազմավարական գերակա նշանակություն ունեցող բնական պաշար:

Ցավոք, սկսած 30-ական թվականներից Սևանա լճի ջրի ինտենսիվ և ոչ հաշվենկատ օգտագործման հետևանքով խախտվել է լճի հավասարակշռությունը՝ առաջ բերելով ջրակենսաբանական պրոցեսների և ամբողջ էկոհամակարգի խաթարում, որի շարունակման դեպքում վտանգվում է Սևանա լճի՝ որպես քաղցրահամ ջրամբարի գոյությունը:

## Լճի կառավարման համակարգը

Հաշվի առնելով Սևանա լճի բնապահպանական կարևոր նշանակությունը՝ լճի և դրա առափնյա գոտու բնապահպանական, սոցիալական, տնտեսական գործառույթների միասնական, համալիր պլանավորման և իրականացման նպատակով դեռևս 1978 թ. ստեղծվեց «Սևան» ազգային պարկը, որն այդ տարածաշրջանի համար վերոնշյալ գործառույթներն իրականացնող անմիջական պատասխանատու մարմին էր: Սակայն այն ժամանակ տիրող կենտրոնացված պլանավորման համակարգը թույլ չէր տալիս պարկին լիարժեք իրականացնել իր վրա դրված ֆունկցիաները, նույնիսկ նրա տնօրինությանը չէին հանձնված օրենսդրությամբ իրեն սահմանված տարածքները:

Սևանա լճի կենտրոնական գոտու կառավարումը, որպես բնության հատուկ պահպանվող տարածքի, իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարությունը՝ «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ միջոցով:

Պարկի տնօրինությունն իրականացնում է Սևանա լճի և դրա առափնյա գոտու (Սևանա լճի հատակից ազատված շուրջ 25000 հա ցամաքային տարածքները) պահպանությունը, հանգստի կազմակերպման պայմանների ստեղծումը, անտառ-տնտեսվարման կազմակերպումը և Սևանա լճում արդյունագործական ձկնորսության կազմակերպումը:

Համաձայն կանոնադրության, այս կազմակերպությունն ամբողջ տարածքի վրա իրականացնում է նաև էկոհամակարգի գիտական ուսումնասիրություն ու բնական պաշարների արդյունավետ օգտագործման մեթոդների մշակում:

Պարկի տարածքի նկատմամբ, համաձայն ՀՀ օրենսդրության, տրված հողօգտագործման, բնապահպանական հսկողության, քաղաքաշինական հարցերի համաձայնեցման և այլ գործառույթներն իրականացվում են տարածքային պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Այդ գոտու տարածքներում, մարզպետի հետ համաձայնեցնելով,

- գյուղատնտեսական բնօգտագործումը պլանավորվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից.
- լեռնահանքաարդյունահանումը, հանքանյութերի մշակումը և արդյունաբերական արտադրական տարբեր ճյուղերի տարածքային պլանավորումն իրականացվում է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից.
- տրանսպորտի և կապի ցանցի զարգացումը և այդ նպատակներով բնօգտագործումը պլանավորվում է ՀՀ կապի և տրանսպորտի նախարարության կողմից.
- քաղաքաշինական պլանավորումը կատարվում է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից՝ մարզպետի հետ համաձայնեցված.
- էներգետիկ ցանցի զարգացումը և այդ նպատակներով բնօգտագործումը պլանավորվում է ՀՀ էներգետիկայի նախարարության կողմից:

Համայնքների վարչական սահմաններում տարածքների բնօգտագործումը, այդ թվում՝ բնապահպանությունը, իրականացվում է համայնքապետի կողմից:

Կառավարման համակարգի վերլուծությունից բխում է, որ տարածաշրջանում գոյություն չունի միասնական կառավարող մարմին, որի հետևանքով շարունակվում է Սևանա լճի և դրա ջրահավաք ավազանի էկոլոգիական վիճակի վատթարացում:

Սևանի հետ կապված առաջացան մի շարք հիմնահարցեր, որոնց լուծումն արդիական է և հրատապ:

## Հիմնահարց - ընդունելի որոշումներ

Հասարակական կյանքում կիրառելի որոշումները երկու կարևոր հատկանիշ ունեն: Դրանք ընդունելի են ներկա սերնդի համար և ապահովում են հեռանկար ապագա սերունդների:

Հակասական է իրավիճակը: Ներկա սերունդը կենտրոնացել է այսօրվա խնդիրների վրա: Կարճաժամկետությունը դարձել է հասարա-



Շարունակությունը հաջորդ էջում

*Սկիզբը նախորդ էջում*

կական ապրելակերպի նորմ։ Վաղվա օրն անտեսվում է։ Անտեսվում է նաև վաղվա սերունդը։

Այսօր ապրող մարդկանց շահը քիչ թե շատ ներկայացվում է որոշումներ ընդունող մարմիններում։ Ոչ ոք չի մտածում վաղը ծնվող մարդկանց մասին, նրանց շահի մասին։ Ընտանիքի մակարդակում դեռևս պահպանվում է երեխաների համար ապրելու նվիրումը։ Սակայն համայնական կամ պետական կյանքում այդ նվիրումն ունեցող մարդիկ գրեթե չկան։ Ընդունվող որոշումները մեծ վերապահումներով ընդունելի են ներկա սերնդի համար, սակայն ընդհանրապես կիրառելի չեն լինի ապագա սերունդների համար։ Նրանց մասին ներկայում Հայաստանում ոչ ոք չի էլ խոսում։

Սևանի խնդիրը բացառություն չէ այս իրավիճակում։ Պետական տարբեր ատյաններում արդեն սկսել են խոսել ջրի բարձրացման բացասական հետևանքների մասին։ Ափամերձ որոշ բիզնեսներ կորուստներ ունեն կամ ափամերձ անտառաշերտի հատման համար գումարներ չկան։ Վերջին երեք տարվա ընթացքում Հայաստանում կառուցվեց ավելի քան հազար կիլոմետր ճանապարհ, իսկ ջրի վեց մետր բարձրացման հետևանքով ջրածածկ եղող երեսուն կիլոմետր ճանապարհը տեղափոխելու համար միջոցներ չեն ճարվում ։

Դաժան սովորություն ունենք. ամեն ինչ քանակով ենք գնահատում։ Հետո զարմանում ենք, որ որակական փոփոխություններ չկան։ Քանակով չափում ենք անտառածածկ հեկտարները, ողողվող ճանապարհահատվածները, հյուրանոցների ապօրինի շինությունների խորտակվող մակերեսները...

Չենք չափում միայն այն, ինչ մենք կարող ենք թողնել մեր սերունդներին։ Չենք չափում այն, ինչից պետք է այսօր հրաժարվենք, որ վաղը դրանից օգտվեն մեր երեխաներն ու թոռները։

Եթե որոշել ենք հրաժարվել Սևանը փրկելուց, հիմնավորող պատճառներ կարելի է գտնել անթիվ-անհամար։ Խնդիրն այն չէ, թե ինչ կորոշվի այսօր։ Էականը վաղվա համար ընդունելի որոշումն է։

Սևանի փրկության հետ կապված ծախսերն ու եկամուտները հաշվառելիս պետք է ի նկատի ունենալ, որ որոշ էական եկամուտներ կամ օգուտներ քանակապես չափելի չեն։ Դա այն որակն է, որը կարող ենք ժառանգություն համարել և տալ ապագային։

## Ահազանգ - ճահճացում

Սևանը բարձրանում է, և անտառածածկ որոշ հատվածներում ճահճացման վտանգ է առաջանում։ Հասարակությունն անտարբեր է։ Եվ պետական մարմինները, և՛ հասարակական կառույցները կարծես չեն նկատում այս հրատապ խնդիրը։ Որոշակի շահագրգռվածություն է դրսևորում բիզնեսը, քանի որ ճահճացող ափամերձ հատվածներում հանգիստ կազմակերպելն անհնար է։ Եվ ափամերձ հատվածում տեղակայված յուրաքանչյուր ձեռնարկություն իր միջոցներով և իր պատկերացրած եղանակով փորձում է լուծել այս խնդիրը։ Արդյունքում, գործընթացն անկանոն է և անկազմակերպ։

Աշնանը տրակտորներով կքանդեմ չիչխանի անտառը և կհեռացնեմ տարածքից -, ասում է ափամերձ հատվածում տեղակայված ձեռնարկություններից մեկի սեփականատերը։ Գուցե սա՞ է լավագույն լուծումը, չգիտեմ։ Մասնագիտական եզրակացության կարիք կա։ Եթե զանգվածաբար անտառը հատվի և ոչնչացվի, ապա ջրի գոլորշիացումը կավելանա և Սևանի բարձրացումը կդանդաղի։ Գուցե ավելի ճիշտ կլինի տեղափոխե՞լ անտառը։

Իսկ ի՞նչ կլինի այն տարածքների հետ, որտեղ վարձակալող ձեռնարկություններ չկան։

Չի թվում, թե հսկայական միջոցներ են պահանջվելու ափամերձ անտառների տեղափոխման խնդրի լուծման համար։ Սակայն պահանջվում է պետական մոտեցում՝ հարցին միասնական լուծում տալու համար։

Թերևս անհրաժեշտ է 2006 թվականի բյուջեում ներառել համապատասխան գումարներ և այդ խնդրի լուծման գործում ներգրավել մասնագիտացված մասնավոր ընկերություններ։ Հասարակական կազմակերպությունները և մասնավոր ընկերությունները նույնպես համաձայն են միանալ լճի վերականգնման գործառույթներին։ Աշխատանքների ճիշտ բաշխման և արդարացի ֆինանսավորման դեպքում խնդիրը հնարավոր է լուծել առաջիկա աշնան և գարնան ընթացքում։

## Ահազանգ - մրցունակություն

Հանգստի սեզոնն է Սևանում։ Աշխարհի տարբեր անկյուններից հազարավոր մարդիկ կրկին այստեղ են՝ կրոնական, մշակութային և բնական հուշարձաններով հարուստ մեր մարզում։

Սևանի ավազանում տուրիստների համար առավել գրավիչ տարածքը Սևանի թերակղզին է՝ իր հանրահայտ վանքային համալիրով։ Դրա կողքին կանգնած մարդը կարող է հիանալ արևածագի գեղեցկությամբ, լճի հայելու պարզությամբ, բարձրաբերձ լեռներով, ինչպես նաև թերակղզու ափամերձ հատվածի տուրիստական զոնու անճաշակ ու անկանոն տաղավարներով ու գույներով։ Յուրաքանչյուրն իր ճաշակով և իր հնարավորությունների սահմաններում ինչ-որ բան է կառուցել, ինչ-որ գույն տվել դրան։ Արդյունքում ստացվել է տուրիստի համար ոչ թե գրավիչ, այլ վանող տեսարան։

Սևանի ավազանում եղած հանգստի կազմակերպման օբյեկտներն օգտվում են բնության ընձեռած հնարավորություններից։ Դա նրանց տալիս է հստակ մրցակցային առավելություն։ Միաժամանակ հզոր տուրիստական կենտրոններ են ձևավորվում Հայաստանում, նաև՝ Սևանի հարևանությամբ։ Ծաղկաձորի և Դիլիջանի նմանօրինակ հաստատությունները նոր թափ են հավաքում՝ ավելի ու ավելի գրավիչ դառնալով տուրիստների համար, առաջարկելով նորանոր ծառայություններ։ Սկսվել է մի գործընթաց, երբ Սևանի հյուրանոցներն ու ռեստորանները ոչ միայն մրցակցում են միմյանց հետ, այլ նաև բոլորը միասին պետք է մրցակցեն համանման այլ կենտրոնների հետ։ Ինչպե՞ս։ Գույների բազմազանությամբ և անճաշակ դիզայնո՞վ։

Այս հարցը պետք է չվրիպի և՛ պետական («Սևան Ազգային պարկ» ՊՈԱԿ), և՛ բիզնես-կառույցների ուշադրությունից։ Եթե ցանկանում ենք Սևանում ունենալ մրցունակ և գրավիչ տուրիստական բիզնես, պետք է հետևենք որոշ միասնական նորմերի դիզայնի և ճարտարապետության, տուրիստական նոր ծառայությունների մատուցման, տարածքի մրցունակության բարձրացման հարցերում։

Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատը հրավիրում է համագործակցության բոլոր շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին այս էական խնդրի լուծման համար։

## Ահազանգ - թափանցիկություն

Սևանա լճի մասին տեղեկատվությունը հասանելի չէ հասարակությանը։ Լճի ավազանի համայնքների բնակիչների համար էական կարևորության հարցեր կան, որոնց մասին գրեթե չի խոսվում։ Համառ ջանքեր են անհրաժեշտ այս կամ այն տվյալը պետական կառավարման մարմիններից ստանալու համար։ Հարցեր կան, որոնք հուզում են և բիզնեսմենին, և ազգաբնակչությանը.

- ինչպե՞ս է իրականացվում լճի ափամերձ տարածքների վարձակալությունը,
- ափամերձ ո՞ր տարածքներում է թույլատրվում ձեռնարկատիրությամբ զբաղվել,
- պետական ո՞ր մարմիններն են իրավասու գործարքներ կնքել կամ վերահսկողություն իրականացնել ափամերձ հատվածների նկատմամբ,
- ի՞նչ գումարներ են ծախսվում պետական բյուջեից լճի վիճակը բարելավելու համար,
- ի՞նչ պետական միջոցառումներ են իրականացվում Սևանում՝ լճի վիճակը բարելավելու և ձկան պաշարները պահպանելու ու ավելացնելու համար,
- ի՞նչպես են բաշխվում պետական միջոցները և ի՞նչ մեխանիզմով է հնարավոր մասնակցել բյուջեի պլանավորմանը,
- ինչպե՞ս ձեռք բերել ձկնորսությամբ զբաղվելու արտոնագիր,
- ի՞նչ պետական միջոցառումներ են իրականացվում Սևանում փրկարարական աշխատանքների կազմակերպման համար։

Ընդհանուր առմամբ, տեղեկատվության անմատչելիությունը նվազեցնում է պետական միջոցառումների նկատմամբ հասարակական վերահսկողությունը։ Իհարկե, ցանկության դեպքում հնարավոր է ինչ-որ կերպ հայթհայթել ցանկացած տեղեկատվություն, սակայն հասարակական անտարբերությունը մասսայական բնույթ ունի, և հիմնականում արտահայտվում է բամբասանքների տեսքով։

Պետական համապատասխան մարմինների, լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների ուշադրության առարկա պետք է հանդիսանա Սևանի ավազանին վերաբերող տեղեկատվության մատչելիությունը և թափանցիկությունը։ Սա մի կողմից կօժանդակի իրազեկության աստիճանի բարձրացմանը և իրավունքների իրագործելիությանը, մյուս կողմից՝ հնարավորություն կընձեռի պետական կառավարման գործառույթներն այս ոլորտում դարձնել մասնակցային և վերահսկելի։

## Ահազանգ - աղտոտվածություն

Տասնամյակներ շարունակ լիճը շահագործվել է ոչ միայն որպես ռեսուրսների հսկայական պաշար, այլ նաև աղտոտվել են լճի ջուրն ու ափերը։ Լճի շուրջը տեղակայված քաղաքների և մեծ գյուղերի կոյուղին ուղղակիորեն ինչպես նաև լիճը թափվող գետերով կուտակվել է այս հսկայական ջրամբարի խորքերում։ Այն կարծիքը, թե լիճը կհասցներ վերամշակել այս թափոնները, ցավոք, իրականություն չդարձավ։ Լճի հատակում ներկայում կուտակված են տասնամյակների կեղտը և լճի ավազանում գործող ձեռնարկությունների տեխնիկական թափոնները։ Այս պատկերն ամբողջանում է լճի ավազանի աղտոտվածությամբ։ Այն հատվածները, որոնք վարձակալված են ձեռնարկությունների կողմից, ինչ-որ կերպ մաքրվում են, սակայն հավաքված աղբն ու կոյուղին կրկին այս կամ այն ճանապարհով լցվում են լիճը։ Գրեթե բոլոր կառույցներում չեն պահպանվում սանիտարական նորմերը։ Մյուս կողմից, աղտոտված են նաև ձեռնարկությունների կողմից չվարձակալված տարածքները։

Թափոնները կուտակվում են լճի հատակին։ Պատահական չէ կենդանական աշխարհի նմանօրինակ արագ փոփոխությունը Սևանի ավազանում։ Աստիճանաբար լիճը բնակեցվում է նոր աղտոտված պայմաններին հարմարված կենդանիներով։

Լիճը կարիք ունի նախ կեղտաջրերի մուտքից պաշտպանվելու, այնուհետև՝ կուտակված թափոններից մաքրման։

## Լուծումներ

Խնդիրներն իրականում շատ են։ Սևանը մեծ հնարավորություններ ունի, սակայն դրանցից օգտվելը խելամիտ մոտեցումներ է ենթադրում։ Կարճաժամկետ մտածելակերպն այսօր կտա գերշահույթ, բայց Սևանի ռեսուրսներից հնարավորություն չեն ունենա օգտվել գալիք սերունդները։

## Ի՞նչ անել։

Բոլոր պրոբլեմների լուծումը թողնել պետական կառավարման համակարգին, արդարացի և արդյունավետ չի լինի։ Դա կնշանակի հիմնական խնդիրների լուծումը հեռացնել այդ լուծմամբ շահագրգիռ հիմնական կողմերից։ Արդյունավետ լուծումները ենթադրում են համակողմանիություն և միաժամանակ դրանցով հետաքրքրված բոլոր կողմերի ներգրավվածություն։

Հայաստանում գործում են էկոլոգիական ուղղվածությամբ բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, որոնք տարբեր ծրագրեր են իրականացնում։ Դրանց մի մասն էլ Սևանի ավազանում է։ Թերությունն այն է, որ ՀԿ- ները ծրագրերն իրականացնում են դոնորային ֆինանսավորումից կախված, որի հետևանքում կորում է ծրագրերի արդիականությունը։ Այսինքն, կարիքի բացահայտումից մինչև ֆինանսավորման պահը անցնում է բավական ժամանակ։ Մյուս կողմից, ՀԿ-ները և ֆինանսավորող կազմակերպությունները համաձայնեցված չեն աշխատում, ինչն ազդում է իրականացվող ծրագրերի արդյունավետության վրա (կամ ծրագրերը կրկնվում են)։

Էկոլոգիական հիմնախնդիրների լուծմամբ հետաքրքրված է նաև ափամերձ հատվածում գործող բիզնեսը։ Լճի վիճակն ու մաքրությունը ուղղակիորեն ազդում են ձեռնարկությունների շահութաբերության վրա։ Սակայն այստեղ նույնպես իրականացվող միջոցառումների փոխադարձ անհամաձայնեցումը բերում է էկոլոգիական հավասարակշռությունների խախտմանը։

Ափամերձ համայնքները նույնպես փոխկապված են լճի հետ։ Դրանց հողատարածքների և անասունների ջրումը մասամբ իրականացվում է լճի հաշվին։ Որոշ համայնքներ ընդհուպ մոտեցած են լճին։ Այստեղ բնակիչները նույնպես հակված են տեսնել լիճը ավելի հարուստ և ընդլայնված։ Ձկնորսությունը այս համայնքների գոյության հիմնական աղբյուրներից է։ Արդեն նկատելի են ինքնակազմակերպված միջոցառումներ, որոնք նախաձեռնված են համայնքների ակտիվ բնակիչների կողմից։

Մեծածավալ աշխատանք է կատարվում նաև պետական կառավարման մարմինների կողմից։

Սակայն բոլոր կողմերի կատարած աշխատանքների չկոորդինացված և անհամաձայնեցված լինելը ազդում է դրանց արդյունավետության վրա։ Աշխատանքների հստակ տարանջատումն ու կոնկրետ կառույցների կողմից պատասխանատվությունների ստանձնումը կօգնի չկրկնել նույն աշխատանքը և հնարավորություն կտա կենտրոնացնել առկա բոլոր ռեսուրսները։

ՁԱՅՆ

**Հիմնադիր և հրատարակիչ**
(լրատվական գործունեություն իրականացնող) «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 28-2,
Վկայական՝ 03 Ա 065178,
տրված՝ 28/06/04

**Հեղինակ**
Վարազդատ Կարապետյան

**Թողարկման պատասխանատու**
Գագիկ Թորոսյան

**Տպաքանակը**
6000 օրինակ։
Տարածվում է անվճար։

**Հասցե**
ՀՀ, ք. Երևան, Տպագրիչների 15-13
Հեռ./ֆաքս: (374 10) 540 289,
www.edrc.am
dzayn@edrc.am

Oxfam